ՄՈՆԵՑՈՒՄ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆՈՂ ՄԻԳՐԱՆՏ ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ

Երկրորդ հրատարակություն

Ուղեցույցը մշակվել և տպագրվել է Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (ՀԱՄԿ) Աշխատանքային միգրանտների իրազեկման կենտրոնի կողմից Աշխատանքի միջազգային կամակերպության «Ռուսաստանի Դաշնությունում միգրանտ աշխատողների պաշտպանության բարելավման և Հարավային Կովկասում միգրացիայի դրական ազդեցության ընդլայնումը ծրագրի շրջանակներում՝ Եվրամիության ֆինանսական աջակցությամբ:

Ուղեցույցում զետեղված նյութերի համար Եվրամիությունը և Աշխատանքի միջազգային կազմակերպությունը պատասխանատվություն չեն կրում:

With funding by the European Union

Հարգելի հայրենակից՝

Աշխատելու նպատակով այլ պետություն մեկնելը հաճախ պայմանավորված է դժվարություններով և բազմաթիվ խոչընդոտներով: Եթե Դուք պատրաստվում եք մեկնել Ռուսաստանի Դաշնություն (ՌԴ) աշխատելու նպատակով, այս ուղեցույցում տեղ գտած խորհուրդները կօգնեն Ձեզ խուսափել Ռուսաստանի Դաշնությունում հարկադիր աշխատանքի, անօրինական գործողությունների կամ մարդկանց շահագործման զոհ դառնալու վտանգից:

Ուղեցույցը հնարավորություն կտա տեղեկանալ Ձեր իրավունքներին և պարտականություններին Ռուսաստանում և կօգնի զերծ մնալ հնարավոր վտանգներից:

Հիշե՛ք

օրինական միգրանտ աշխատողները անգնահատելի ծառայություն են մատուցում իրենց աշխատանքով և ընդունող երկիրը պարտավոր է ապահովել նրանց արժանապատիվ աշխատանքով ու միջոցներ ձեռնարկել այն պաշտպանելու ուղղությամբ:

Լրացուցիչ տեղեկություններ և անվճար խորհրդատվություն ստանալու համար զանգահարեք +37410 58 92 31 հեռախոսահամարով կամ այցելեք Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի Աշխատանքային միգրանտների իրազեկման կենտրոն՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3, 806 սենյակ:

1. Հավաստի տեղեկատվություն ունեցե՛ք Ձեր աշխատանքի, դրա պայմանների և գործատուի վերաբերյալ:

Ծանոթացե՛ք Ձեր իրավունքներին և պարտականություններին համաձայն ՌԴ օրենսդրության:

2. Մի' տրամադրե'ք Ձեր անձնագիրը և այլ կարևոր փաստաթղթերը այլ անձանց:

3. ՌԴ տարածքում գտնվելու ընթացքում անձնագիրը կորցնելու դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՀ դեսպանատուն, հյուպատոսարան՝ վերադարձի թույլտվության վկայական ստանալու համար: Վկայական ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում:

4. Սահմանը հատելիս անհրաժեշտ է ներկայացնել՝

- ՀՀ անձնագիր
- ՌԴ միգրացիոն քարտ

Միգրացիոն քարտի ձևաթուղթը տրամադրվում է անվճար սահմանը հատելու ժամանակ անցագրային կետում կամ օրինակ, օդանավի անձնակազմի կողմից: Լրացրեք միգրացիոն քարտի համապատասխան “А” և “Б” հատվածները և ստորագրեք:

Ուշադրություն.

Եթե Ռուսաստան եք մեկնել աշխատելու նպատակով, ապա միգրացիոն քարտում «Ժամանման նպատակը» բաժնում ընդգծեք «աշխատել» բառը:

Անձնագրային ստուգման կետում համոզվեք, որ միգրացիոն քարտի վրա դրվել է մուտքի կնիք և հետևեք, որպեսզի “Б” հատվածը վերադարձվի Ձեզ:

5. Միգրացիոն քարտի **“Ե”** հատվածը պահեք Ձեզ մոտ մնացած փաստաթղթերի հետ ՌԴ-ում գտնվելու ամբողջ ընթացքում և վերադարձրեք այն վերադառնալիս անձնագրային ստուգման կետում:

6. Ռուսաստանի Դաշնություն մուտք գործելու օրից երեք աշխատանքային օրվա ընթացքում անհրաժեշտ է հաշվառվել Ձեր բնակության վայրի տարածքային միգրացիոն ծառայությունում:



7. Հաշվառման համար ծանուցման բլանկը կարող եք վերցնել փոստում կամ ցանկացած միգրացիոն ծառայության կետում:

8. Միգրացիոն ծառայությունում հաշվառվելուց հետո Դուք կարող եք 90 օր օրինական գտնվել ՌԴ տարածքում:

9. Միգրացիոն հաշվառման կարգի և/կամ ժամկետների խախտումը կարող է հանգեցնել վարչական պատասխանատվության 2000-5000 ՌԴ ռուբլի տույժի չափով, իսկ առանձին դեպքերում՝ երկրից արտաքսման:

10. Եթե որոշել եք աշխատել ՌԴ-ում, ապա՝ Ֆիզիկական անձ գործատուի մոտ (օրինակ՝ այգեպան, դայակ...) աշխատելու համար ձեզ անհրաժեշտ է ունենալ Պատենտ, որի համար հարկավոր է միգրացիոն ծառայության տարածքային մարմին ներկայացնել

- դիմում Պատենտ ստանալու մասին,
- անձը հաստատող փաստաթուղթ,
- միգրացիոն քարտ,
- ֆիքսված ավանսային վճար՝ ամսեկան 1000 ՌԴ ռուբլի

Պատենտը տրվում է 1-3 ամիս ժամկետով: Պատենտի ժամկետը կարող է բազմիցս երկարաձգվել 3 ամսով՝ ամսեկան 1000 ՌԴ ռուբլի վճարի դիմաց: Պատենտի գործողության ժամկետը երկարացված է հաշվվում այն ժամանակահատվածով, որի համար Դուք վճարել եք ֆիզիկական անձանց համար նախատեսված եկամտահարկը՝ ֆիքսված ավանսային վճարի տեսքով: Այս դեպքում չի պահանջվում դիմել միգրացիոն տարածքային ծառայություն: Պատենտի գործողության ժամկետը դադարեցվում է այն օրվանից, որը հաջորդում է նախորդ վճարած եկամտահարկի ժամանակահատվածի վերջին օրվան:

Այն դեպքում, երբ համապատասխան բյուջե վճարվելիք հարկի ընդհանուր գումարը, որը Դուք հաշվարկել եք Պատենտի հիման վրա իրականացված Ձեր աշխատանքային գործունեությունից փաստացի ստացած եկամուտներից, գերազանցում է ֆիքսված ավանսային վճարի գումարը տվյալ հարկային հաշվետու ժամանակահատվածում, ապա Դուք պարտավոր եք ներկայացնել հարկային հայտարարագիր:

Միևնույն ժամանակ Պատենտի գործողության ամբողջ ժամանակահատվածը չի կարող գերազանցել 12 ամիսը, Պատենտը տրամադրելու օրվանից:

Պատենտը ստանալու օրից 12 ամիսը լրանալուց հետո Դուք կարող եք կրկին դիմել միգրացիոն ծառայության տարածքային մարմին նոր Պատենտ ստանալու խնդրանքով:

Եթե Պատենտի ժամկետը չի երկարաձգվում կամ նորը ունենալու անհրաժեշտության դեպքում չեք դիմում այն ստանալու համար, և լրացել է Ձեր՝ ՌԴ-ում օրինական գտնվելու ժամկետը, ապա Պատենտի ժամկետի ավարտի օրվանից 15 օրվա ընթացքում Դուք պարտավոր եք լքել ՌԴ տարածքը: Նշված 15 օրերի ընթացքում Ձեր՝ ՌԴ-ի տարածքում գտնվելը համարվում է օրինական:

Եթե Դուք ունեք Պատենտ, սակայն դադարում եք աշխատել ֆիզիկական անձ գործատուի մոտ և որոշել եք աշխատել իրավաբանական անձ գործատուի մոտ, ապա՝ *տե՛ս կետ 11-ը*:

Պատենտը համարվում է օրինական միայն օրինական միգրացիոն հաշվառում ունենալու դեպքում:

11. Իրավաբանական անձ գործատուի մոտ (օրինակ՝ շինարարական կազմակերպություն) աշխատելու համար Ձեզ անհրաժեշտ է աշխատանքի թույլտվություն, որն ունենալու համար հարկավոր է միգրացիոն ծառայության տարածքային մարմին ներկայացնել

- դիմում 2 օրինակից,
- անձնագիրը և պատճեն,
- միգրացիոն քարտը,
- պետական տուրքի անդորրագիրը (2000 ՌԴ ռուբլի արժողությամբ),
- 30x40 մմ չափի գունավոր լուսանկար

12. Աշխատանքային գործունեություն ծավալելու թույլտվություն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում անհրաժեշտ է անցնել բժշկական զննում: Եթե նշված ժամկետում Դուք չեք տրամադրում համապատասխան բժշկական փաստաթղթերը , ապա Ձեզ տրամադրված աշխատանքի թույլտվությունը կորցնում է իրավաբանական ուժը:

13. ՌԴ-ում աշխատանքի անցնելուց առաջ Ձեր գործատուի հետ կնքեք աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր, որը կնքվում է ոչ ավել, քան մեկ տարով, սակայն կարող է երկարաձգվել:

14. Աշխատանքային հարաբերություններում օրինական միգրանտ աշխատողներն ունեն նույնպիսի իրավունքներ, ինչպիսին տեղացի աշխատողները:



15. **Յուրաքանչյուր ոք իր շահերը պաշտպանելու նպատակով իրավունք ունի ստեղծելու արհեստակցական միություններ և անդամակցելու այդ միություններին:**

(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր):

Ընդունող երկրում հնարավոր վտանգներից, աշխատավայրում դժբախտ պատահարներից և շահագործումներից հնարավորինս խուսափելու համար դիմեք արհմիություններին: Ամբողջ աշխարհում օրինական միգրանտ աշխատողների շահագործման կանխարգելման ամենաարդյունավետ միջոցներից մեկը նրանց՝ արհմիությանը անդամակցելու իրավունքը իրականացնելն է: Ցանկացած աշխատող, այդ թվում՝ օրինական միգրանտ աշխատողը, արհմիությանը անդամակցելով, ավելի պաշտպանված է գործատուի չարաշահումներից:

Արհմիություններում միավորումն անխուսափելի է, քանի դեռ գոյություն ունեն հակադիր շահերով մարդկանց երկու խմբեր: Գործատուի շահը կայանում է աշխատողին շատ աշխատեցնելու և հնարավորինս քիչ վարձատրելու մեջ: Միևնույն ժամանակ աշխատողները ցանկանում են իրենց աշխատանքի դիմաց ստանալ արդարացի և արժանապատիվ վարձատրություն:

Շահերի հենց այս բախումն էլ բերեց արհմիությունների ստեղծմանը: Այն միակ գործիքն է գործատուի հետ աշխատողների կոլեկտիվ խնդիրները լուծելու համար:

Միայնակ մենք չենք կարող պաշտպանել մեզ գործատուի անարդարացի կամակատարություններից և տուգանքներից, աշխատանքից անօրինական ազատումներից: Չենք կարող հասնել աշխատանքային պայմանների բարելավման:

Հաճախ մարդը ստիպված է լինում համաձայնել գործատուի կողմից սահմանված բոլոր պայմաններին՝ անտեսելով իր իսկ իրավունքներն ու շահերը նույնիսկ չնչին աշխատավարձի դիմաց, քանի որ առանց աշխատավարձի հնարավոր չէ գոյատևել:

Միավորվելով արհմիություններում՝ աշխատողները կարող են հաղթահարել իրենց աշխատանքային խնդիրները:

Ունենալով արհմիություն՝ մենք ստիպված չենք լինի կուրորեն ենթարկվել գործատուի քմահաճույքներին:

Ստեղծելով հզոր արհմիություն՝ մենք հնարավորություն ենք ստանում գործատուի
հետ շփվել ինչպես հավասարը հավասարի, վերադարձնել մեր կորցրած արժանապատվությունը, որն այնքան դժվարությամբ ձեռք ենք բերել: Մենք ինքներս ենք հսկողություն սահմանում մեր աշխատանքի և ապրելու պայմանների նկատմամբ:

Աշխատողները, առանց որևէ տարբերության, իրավունք ունեն իրենց ընտրությամբ ստեղծելու կազմակերպություններ, ինչպես նաև անդամակցելու այդպիսի կազմակերպություններին՝ վերջիններիս կանոնադրություններին ենթարկվելու միակ պայմանով, առանց նախնական թույլտվության: (ԱՄԿ թիվ 87 Կոնվենցիա, «Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին»):

Արհմիություն ստեղծելու իրավունքը լայնորեն տարածվում է բոլոր աշխատողների վրա, անկախ մասնագիտությունից, սեռից, մաշկի գույնից, ռասայից, հավատքից, ազգությունից, քաղաքացիությունից, քաղաքական հայացքներից:

Անհրաժեշտ հեռախոսահամարներ և հասցեներ՝

Հայաստանի արհեստակցական միությունների կոնֆեդերացիա (ՀԱՄԿ),
Աշխատանքային միգրանտների իրազեկման կենտրոն
հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/3, 806 սենյակ
հեռախոս՝ +374 10 58 92 31

ՌԴ-ում ՀՀ դեսպանություն
հասցե՝ Մոսկվա, Արմյանսկի պերեուլոկ, տուն 2
հեռախոս՝ (495) 625 73 05
URL: www.armenianembassy.ru

ՌԴ-ում ՀՀ գլխավոր հյուպատոսություն
հասցե՝ Սանկտ-Պետերբուրգ, Դեկաբրիստների 22
հեռախոս՝ (812) 571-72-36

ՌԴ-ում ՀՀ հյուպատոսական կետ Սոչիում
հեռախոս՝ (86222) 974 428

ՌԴ-ում ՀՀ հյուպատոսական կետ Ռոստովում
հեռախոս՝ (863) 253-64-54, (863) 253-67-45

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ